

4888

83.09

U-22

1

Հ. ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԵՐ

83.09
Մ-22

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1987

03 AUG 2005

ՀԽՍՀ ՈՒՍՍԻՑՉԱԿԱՆ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն 33 ՀԵՂԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ն 33

83.09

48-22

45

83.09 4398-39

527

Paul Hylde

572

8/1984

100

- 1 -

100

Հ. ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

፩ ብ ክ ተ ስ ብ ክ ዘ ብ ክ ተ ተ ብ ክ

(ՈՒԱՆԴԱԿ ՆՑՈՒԹԵՐ ՀԵՌԱԿԱՑՈՂՆԵՐԻՆ)

ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐ

(1759—1805)

ԾՐԱԳԻՐ

Գերմանիայի գրությունը Շիլլերի եպոխայում ենգելսի և Մարքսի վերլուծության համաձայն: Շիլլերի ստեղծագործության կապն այդ գրության հետ: Նրա կապը Յեվրոպայի պատմության հետ: Շիլլերը և ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը: Գերմանական գրականության խոշոր գրողների տրագեդիան: Շիլլերը և Վյուրտեմբերգի ֆեոդալական իշխանությունը: Կարլ Յեվգենին և նրա հիմնած զինվորական ակադեմիան: Այս ակադեմիայի ներքին ուժիմը և Շիլլերն այդ միջավայրում:

Շիլլերի ստեղծագործական առաջին շրջանը: «Շտուրմ ու նոր» գրանդէ-օպերան: Շիլլերի «Ավազակներ»-ը և «Խարդավանք» սեր»-ը: Հակասություններ Շիլլերի մեջ: Մեշչանական տրագեդիան: Սոցիալական գրամա: Շիլլերականության խնդիրը: Շեքսակիր և Շիլլեր:

Շիլլերի ստեղծագործության յերկրորդ և յերրորդ շրջանը: «Վիլհելմ Տելլ»: Շվեյցարական հետամնաց կանտոնների գրությունը և նրանց պայքարը: Այդ պայքարի գնահատականն ըստ ենգելսի Շիլլերի գերը և նրա աղղեցության խնդիրը:

Խմբագրությամբ ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ



Է. 4393
Տ. 2. 39

Շիլքրի, ինչպես նաև գերմանական կլասիկ գրականության և կլասիկ իդեալիստական փիլիսոփայության մյուս նշանավոր հանձնարների կյանքն ու գրական գործունեցությունը սերտորեն կապված և Գերմանիայի պատմության «այն ամոթալի քաղաքական և սոցիալական խռոխայի» հետ, յերբ նույնիսկ «Ժողովրդի ամենալավագույն և ամենաուժեղ մտքերն» անգամ «կորցրել ելին ամեն մի հույս իրենց յերկրի ապագայի վերաբերմամբ» *): Համեմատած Յելլոպայի մյուս յերկրների հետ, XVIII դարի Գերմանիան իր տնտեսական-քաղաքական կյանքով ամենահետամնաց յերկրն եր: Յեթե Քրանսիական բուրժուազիան պը ակալ յում վոչչացրել եր ֆեոդալիզմը և ստեղծել եր բուրժուական հասարակություն, յեթե անգլիական բուրժուազիան գործնականում հանդիսանում եր արդյունագործական հեղափոխության կրողն ու զրոշակակիրը, ապա Գերմանիայում այդ պլոցենն ընթանում եր ֆեոդալական-բոնակալական մանր պետությունների համատարած խեղճության սահմաններում:

Սկայն սխալ կլիներ գերմանական կլասիկ պոեզիայի և փիլիսոփայության «համամարդկային» պրոբլեմներն անջատել Յելլոպայում տեղի ունեցող պատմական իրադարձություններից և ամեն ինչ բացարել գերմանական կյանքի «հետամնացությամբ», ինչպես անում են վորոշ պատմաբաններ:) Մարքսը և Ենգելսը, չայնեյի հետ միասին, սիրում եյին կրկնել թե գերմանական կլասիկ փիլիսոփայությունն ու արվեստը Քրանսիական բուրժուական հեղափոխության գերմանական տեսությունն են: Խօսքն այստեղ իհարկե Քրանսիացիներին ընդորինակելու մասին չե: Գերմանացիները մշակեցին «ուրիշների» հեղափոխության տեսությունը միանգամայն լուրջ պատճառների թելազրանքով, չնայած, վոր իրենց յերկրում այդ հեղափոխության համար անհրաժեշտ պայմաններ չկային:

*.) Ենգելս, — «Գերմանիայի պրությունը» (Մարքս—Ենգելս, — հ, 5, 1930 թ., հջ 7):

XVIII դարի յերկրորդ կեսի գերմանական իրականության վողջ առանձնահատկությունը հենց այն եր, զոր ինչպես Մարքսն և առում, այնտեղ միաժամանակ արտացոլվում երին և ճամաշխարհային պատմական իրադարձությունները և գերմանական հասարակական-քաղաքական կյանքի հետամնացությունն ու ինդությունը:

Գերմանական կլասիկ փիլիսոփայության և գրականության բոլոր սպեցիֆիկ պրոբլեմները, Մարքսի և ենգելսի պնդումով, արտացում ելին հենց այդ հակասությունները: Այդ հակասությունների վրա յի խարսխվում մի կողմից նրանց վիթխարիությունն ու հոյակապությունը, իսկ մյուս կողմից նրանց գծածությունը, մանրությունն ու խորին հետամնացությունը նույն յելլրոպական յերկրների համեմատությամբ:

Միանգամայն պարզ ե, զոր Շիլլերը չեր կարող խուսափել գերմանական իրականության այս յերկու բեկոններից: Նրա ստեղծագործությունների, ինչպես նաև արվեստի տեսության մեջ պետք ե եյական դեր խաղային «հոյակապությունն» ու «խեղճամատությունը» և այդ հակատագրական պայքարը վերջի վերջո պետք ե պասակվեր վերջինի հաղթանակով:

Ահա թե ինչպես ե ենդեմը բնութագրում գերմանական գրականության խոշորագույն հանձարների այդ պատմական տրադիցիան:

«... 1750 թվի մոտերը ծնվեցին Գերմանիայի բոլոր մեծ մտքերը, բանաստեղծներ՝ Գյոթեն և Շիլլերը, փիլիսոփաներ՝ Կանտը և Ֆիխտեն, իսկ քսան տարի անց, գերմանական վերջին մետափիզիկ Հեգելը: Այդ եպօփայի յուրաքանչյուր նշանագոր յերկը տոգորված ե բողոքի, վրագովմունքի վորով՝ այն ժամանակավա գերմանական ամբողջ հասարակության զեմ: Գյոթեն զբեց «Գյոց Փոն Բերլիխինդենը», հեղափոխականի հիշատակի դրամատիկական գովքը: Շիլլերը զբեց «Ավագակները», փառաբանելով մեծահոգի յերիտասարդին, վորը բացահայտ պատերազմ եր հայտարարել ամբողջ հասարակությանը: Բայց դրանք նրանց յերիտասարդական գրվածքներն ելին: Տարիների հետ նրանք կորցրին ամեն մի հույս: Գյոթեն սահմանափակվում եր ամենահամարձակ

սատիրաներով, իսկ Շիլլերը կընկներ հուսահատության մեջ, յեթե ապաստան չգտներ գիտության մեջ, հատկապես՝ հին Հունաստանի և Հոռոմի մեծ պատմության մեջ: Նրանցով ել կարելի յե դատել մնացածների մասին»^{*)}):

Ցրիդըի Շիլլերը ծնվել է 1759 թվի նոյեմբերի 10-ին Վյուլտեմբերգի Մարքսի քաղաքում, զինվորական բուժակի ընտանիքում: Տասնյերկու տարեկան հասակում ընդունվում է այսպես կոչված «Կարլ Շուլլե»—զինվորական «ակաղեմիա», զոր հիմնել եր այդ ժամանակվա Գերմանիայի ամենանողկալի բռնապետներից մեկը—Վյուլտեմբերգի գուքս Կարլ-Յելվինին: Դպրոցի հիմնական նպատակն եր դաստիարակել միապետությանը հավատարիմ ճորտեր: Այդ «ճորտերի պլանացիայում» Շիլլերն անցագործ ութը տարի: Նա պաշտոնապես պետք ե զբաղվեր բժշկական գիտություններով, բայց իրականում զբաղվում է փիլիսոփայությամբ և գրականությամբ: Այստեղ նա կարգում է Լեյբիփայի հին, Մենդելեյոնին, Հելվեցիուսին, Հոլլբախին, Լոկիփին: Միաժամանակ նա ուսումնական կուրսում է Լեսինդին, Գյոթենին և ծանոթանում է «Փոթորկի և գրոնի» շարժման գրողների ստեղծագործություններին: Այստեղ նա գրում է նաև իր առաջին բանաստեղծությունները, վորոնց մեջ գուրս ե գալիս Փրանսիական ժամանակի դեմ և հանդիս ե գալիս «մաքուր զգացմունքների» ու «բնության» պաշտպան: Այդ բանաստեղծություններից ըստ «Ավագակները», փառաբանելով մեծահոգի յերիտասարդին, վորը նրա վրա հսկայական ազգեցություն և զորել յերկում ե, զոր նրա վրա հսկայական ազգեցություն և զորել Գյոթենի «Վերթիեր»-ը և հատկապես Խուսույին սկիրած բանաստեղծության մեջ նո իրեն հայտարարում ե նրա յերկրպատան և հենեկող, իսկ Խուսույին համարում է Փեղալիքմի և բոնագալության կողմից վոտնահարված աղասության մարգարել:

Խուսույի հսկայական ազգեցությունն իրեն զգալ ե տալիս հատկապես նրա վաղ զրամատիկական գործերի մեջ—«Ավագակներ» (1781), «Ֆիտակոյի գավադը ությունը Զեպակա» (1783), «Սեր և խարդավանը» (1784): Այս գործերի մեջ Շիլլերը լոյն ծավալով շրջափում է բուրժուազիական մոլորդական հեղափոխության, հասարակական կարգերի վերա-

*) Ենգելս.—Նույն տեղ:

փոխման, բռնակալության վերացման և սրանց հետ կապված բաղմաթիվ քաղաքական ու փիլիսոփայական պրոբլեմներ:

2.

Իր առաջին դրամատիկական ստեղծագործությունը՝ Շիլլերն սկսեց գրել 1777 թվին.—«Մենք այնպիսի գրամականքնենք, վոր բռնակալն անպայման կցանկանա այս եւ այս այս մականեր»—գրում եր Շիլլերն իր գովորական ընկերոջը «Ավազակներ»-ի մասին:

Յեկ իրոք Վյուրաեմբերգյան վոստիկանական դքսությունը վոչ միայն նրա պիեսին բեմագրության թույլտվություն «Հշնորհեց», այլև Շտուտգարդի զինվորական բուժակ Ֆրիդրիխ Շիլլերին արգելեց իր պիեսի տպագրության գործով քաղաքի սահմաններից դուրս գալու։ 1872 թվին Շիլլերին հաջողվում է, Վյուրաեմբերգի գքսից ծածուկ, Մանհայմում կազմակերպել «Ավազակների» առաջին բեմագրությունը։ Տպագրությունը շատ ցուցիչ եր։ Անսահման եր նաև դքսի զայրույթը, վոր «Բուժակին» կանչելով իր մոտ վճռականապես արգելեց գրական ստեղծագործությամբ զրազվել և նրան կարգի հրավիրելու համար *) յերկու շաբաթ բանտ նստեցրեց։

«Ավազակներ»-ի թեման Շիլլերը վերցրել է 1775 թ. մհամատուկ հանած մի պատմվածքից—«Մալդկային սրաի պատմությունը», վորի հեղինակը Խրիստիան Շուբարդն եր։ Պատմվածքի սյուժեն յերկու յեղբոր՝ Վիլհելմի և Կարլի բնավորությունների արմատական տարբերություններից բղխող կրնֆլիկտի պատմությունն է։ Համալսարանում, վորաեղ սովորում եյին յերկու յեղբայրները, Կարլն որերն անցեկացնում խնջույքներում և ուրախ ընկերական յերեկույթներում, տարվում ե ազատությամբ, մինչդեռ ավագ յեղբայր Վիլհելմն այդ բոլորի մասին խտացրած ու չափազանցրած գույներով հաղորդում է հորը։ Պարտքերը և դուելլ Կարլին ստիպում են փախչել Նա մանում և Ֆրիդրիխ Ա-ի բանակը ծառայության, պատերազմի ժամանակ վիրավորվում ե և հիվանդանոցում պառկած մի «մեղայական» նամակ և գրում հորը, վորը սակայն տեղ չի համանում, քանի վոր ավագ յեղ-

բայրը գողանում և թագցնում է հորից։ Պատերազմից հետո վերադառնալով հայրենիք Կարլը բատրակություն և մանում մի գյուղացու մոտ, իր հոր ամբողջից վոչ հեռու։ Մի անգամ, անտառում աշխատելու ժամանակ, նա նկատում է թե ինչպես իր մոտով անցնող հոր կառքի վրա հարձակվում են զիմակավորված ավազակներ։ Նա ազատում է իր հորը, բայց ավազակներից մեկը խոստովանում է, վոր ծերունու գեմ այդ զավադիլ սպանություն կազմակերպողը նրա ավագ վորդի Վիլհելմն է։

Ծերունին ինքն իրեն մեղաղը ում է կրտսեր վորդուն ժառանգությունից զրկելու և տնից հնացնելու իր վորոշման համար, Կարլը պատմում է նրան իր ով լինելու մասին և մի անգամ ևս ցույց է տալիս իր մեծահոգությունը՝ ներումն խնդրելով հորից՝ իր չարամիտ յեղբոր համար։

Ինչպես այս պատմությունը, այսպես ել Շիլլերի գրաման, կառուցված է հարազատ յեղբայրների թշնամանքի վրա։ Բայց գդվար չե նկատել վոր Շիլլերն այդ պատմվածքից վերցրել և մերկ կմախքը միայն, վոր նա այդ կմախքին նոր միս ու արյուն և տվել և շնչափորել և նոր գաղափարներով ու մոտիվներով։ Այստեղ հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել Գյոթելի և Ժան-Ժակ Ռուստոյի աղեղցությունը։

Բացի այդ, Շիլլերի մոտ յեղբայրների թշնամանքի Փարուցան զտվում է իր մեշնանական գունավորումից և, վոր գլխավորն և, աղատվում է Փիոլիոլիտիական հիմքից և զրվում է սուցիալական հիմքի վրա։ Ի գեմս Ֆրանցի և Կարլի հակագրվում են վոչ այնքան յերկու տարբեր հոգեբանություններ, վորքան յերկու միանգամայն տարբեր զասակարգային սկզբունքների և աշխարհայացքի ներկայացուցիչներ։

Ֆրանցը—այդ Փեողալական կալվածատերի և Փեողալական բռնակալության տիպիկ ներկայացուցիչը, հակագրվում է հեղափոխական բյուրոկրատիանության ազատամիտ և բարեհոգի ներկայացուցիչ Կարլին։

Կասկածից գույս ե, վոր Շիլլերի առաջին գործն իր մեջ մարմացնում է «Գրօնի և փոթորկի» գրական շաբժմանը հատուկ ցասումն ու բողոքը հին կարգերի գեմ, բայց, այսուամենայնիվ, Շիլլերի այս գործը չի կարելի նույնացնել վերռնիշալ հոսանքի դործերի հետ։ Նրանց մոտ նույնպես հակաբռնակալական պայքարը

*) Շիլլերը քաղաքից գույս եր յեկել առանց դքսի թույլության։

բազմաթիվ ձևերով ներկայացվել ե, բայց այնուամենայնիվ այդ պայքարն այնտեղ հաճախ վերածվում եր մի պայքարի, վորոնողված եր ընդհանրապես հասարակության և հասարակական ամեն մի պայմանականության դեմ: Շիլերի առաջին գործը մի քայլ ե գեղի ակտիվ և կոնկրետ սոցիալական թեմատիկան, իսկ նրա ճակատին փակցրած նշանաբանը — «Բունակաների դեմ» — անշերկբայրեն վկայում ե նրա հակաֆեոդալական ուղղության մասին:

Այսպիսով «Ավագակները» նախ և առաջ մի ուժեղ պոլիմիկական հարձակում եր ֆեոդալական բռնապետության, ֆեոդալական վողջ հասարակական-քաղաքական սիստեմի ու «նեխվող»-ը, «յերերվող» ֆեոդալական եպոփայի դեմ:

Շիլերի գրամայի հակաֆեոդալական վոդին այնքան ցայտուն կերպով և գրսկորվել, վոր այդ նկատել են նույնիսկ այդ հասարակության ոռւսական ներկայացուցիչները: Գյոթեն իր հայտնի զրույցների ժամանակ եկկերմանին պատմում ե, թե ինչպես, յերբ նա ծանոթացավ ուուս իշխան Պուտյոնինի հետ, վերջինս մի խոսակցության ժամանակ Շիլերի «Ավագակների» մասին, ասաց, — «Յեթե յես ասոված լինեյի և յերկիրն ստեղծելու մոմենտին զգայի, վոր այնտեղ պետք ե գրվի Շիլերի «Ավագակները», ապա յես կհրաժարվեյի աշխարհն ստեղծելու մտքից»:

Շիլերն ընտրելով ակառուալ սոցիալական թեմատիկա, բնականաբար չեր կարող այն աելավորել «Գրոհի և փոթորկի» շարժման զրամատիկական ժանրերի արտադրյան սահմաններում: Ես պետք ե ստեղծեր նոր ֆարուխ, նոր կոմպոզիցիա, նոր վոճակ այդ ամենին հաղորդեր պատմական կոնկրետություն: Յեկիրոք այնտեղ, վորտեղ Շիլերը կանգնում է ֆեոդալական կարգերի դեմ ըմբուտանալու ոհակ պատմական հողի վրա՝ նա հանդիս է զալիս վորպես սեալիստ: Նրա գործի այդ մասերում մեր ուղարձրանում ե մի ամբողջ պատմական իրականությունը պետական-քանակալական քաղաքական սիստեմով, հասարական կարգերի գարշաճուտությամբ ու գուհիկ նյութապահուածան իզեռողգիայով: Իսկ այնտեղ, վորտեղ Շիլերը փորձում է ակագրել իր գրական իդեալները և ֆեոդալիզմի դեմ պայքարելու գրական ուղի նշել այստեղ նա հանդիս է զալիս վորպես դաշտավայրի լուսական կոնկրետությունից:

և քաշվում և իդեալների աշխարհը: Բնականաբար այդ մասերում նրա յերկը կորցնում է իր պատմական կոնկրետությունը, ուստի մատական գծերը, իսկ սոցիալական-պատմական թեմատիկան տարրալուծվում է վերացուկան «չարի» ու «բարու» սկզբունքների նույնքան վերացական պայքարի մեջ: «Ավագակների» գաղափարական կոնցեպցիայի այս յերկությունը չեր կարող չափաղալու նրա ժամանակական վարդացման, կոմպոզիցիայի, վոճի և խարակատերների մշակման վրա:

Ինչպես հայտնի յե, XVIII դարի «Լուսավորչական» ուսումնական թեման, դասակարգային պայքարի թեման եր, բուրժուազիայի և ազնվականության պայքարի թեման: Բայց հայտնի յե, վոր դասակարգային պայքարի այդ թեման լուսավորչական ուսավորմի մեջ, այսպես ասած, ուղղակի ձևով չեր հանդես գալիս: Նա հանդես եր գալիս մասնավոր ընտանեկան կոն-ֆլիւն ների ձևով: Լուսավորչական ուսավորմի մեջ ընտանիքը, արենակարգական կապերի նկարագրությունն եյական տեղ եյին բանում (հիշենք թեկուղ Դիդրոյի գրամաները), վորովհետեւ եյին բանում (հիշենք թեկուղ Դիդրոյի գրամաները), վորովհետեւ Ստեկայն Շիլերի ընտանեկան կոնֆլիկտական պատկերացման համար: Յեղայրություն, ազատություն) գեղարվեստական պատկերացման համար:

Ստեկայն Շիլերի ընտանեկան կոնֆլիկտական կոնֆլիկտների սահմաններում: Կարլի բունատարության համար անհրաժեշտ եր ավելի լայն առարկեղի ահա կարլը ժամանակավորապես գուրս և զալիս ընտանեկան կոնֆլիկտների նեղ սահմաններից և վոտք և զնում ավելի լայն ըրջաններ: Թեմայի այս ծափալումը նախ պետք է ցուցադրեր XVIII դարի բուրժուական ուսավորմի սահմանական կուռքի կանոնների նեղ սահմաններից և քաղաքական-հասանական կուռքի կանոնների: Դրա հական պայքարի լայն կոտակեր տալու բնագավառում: Դրա հական պայքարի լայն կոտակեր պետք է նրաժարվեր նաև բուրժուական «ընտանեկան» դրամայի ստեղծագործական տրադիցիաներից: Ստեկայն Շիլերը չգնաց բուրժուական սեալիստական դրամայի խորացման և այն նոր սատիճանի բարձրացնելու ուղիով: Կարլի հակաֆեոդալական գործունեցությունն ընտանիքից դուրս և նրա ուղիրիկան» ավագակախմբի քաջագործությունները պետք է մշակելին ստեղծագործական նոր սկզբունքներով:

«Ավագակների» այս ժանրային յերկությունը ցայտուն կերպով գրսկորպել և ամենից առաջ նրա կմնարոնական հերոսների բնութագրության մեջ:

Կարլը և Ֆրանցը ուեալ իրական հակասակորդներ են այն չափով, վորչափով նրանք ներկայացնում են յերկու հակառակորդ գասակարգեր, յերկու գասակարգային տարբեր սկզբունքներ և աշխարհայացք: Բայց ըստ Շիլլերի մանր-բուրժուական կոնցեպցիայի՝ «բարոյական-եստետիկական աշխարհում չկա ավելի հետաքրքիր բան, քան առաքինության և արատի բաղխումը»*): Այստեղից Շիլլերի ձգտումը—Կարլի և Ֆրանցի ուեալ իրական պայքարը վերածել «չարի» ու «բարու» միջև տեղի ունեցող խորհրդանշանի, բարոյախոսական վերացական սկզբունքների հավիտենական պայքարի:

Այսպիսով, հակաֆեոդալական ըմբոստացումը նման բարոյախոսական լույսի տակ պետք է վերածվեր «առաքինության» ըմբոստացմանն «արատի» գեմ, իգեայի ըմբոստացմանը պրակտիկայի գեմ, վոգու ըմբոստացմանը մատերիայի գեմ:

Կարլը և Ֆրանցն ապրում են յերկու կյանքով—ուեալ շոշափելի, նյութական-զգացողական հարաբերությունների մեջ և բարոյախոսական արտօրակցիայի աշխարհում: Կարլը բունտար և, ֆեոդալական ուեալ բոնակալութկան ուեալ թշնամի: Նա բացասում է իշխող քաղաքական-սոցիալական կարգերը՝ նրա ուեալ ներկայացուցիչների գոհերիկ նյութական փիլտրության հետ միասին: Միաժամանակ յերազում և այնպիսի հանրապետական կարգի մասին, «վորի առաջ չոռմը և Սպարտան կուսանցներ կթվան»: Բայց յերազել գեռևս չի նշանակում ունենալ հասարակության վերակառուցման կրնկրեա ծրագիր և հեռանկար: Աճրող խնդիրն այն է, վոր ինչպես Կարլի համար, այնպես ել Շիլլերի համար, սոցիալական հեղափոխության պրոբեմը վերածվում է ետիկական պրոբեմի, իսկ ինքը՝ Կարլը, կոնկրետ, իրական բուրժուական խոռվարարից՝ մաքուր աղատության սկզբունքի: «Ավագակների» առաջաբանում Շիլլերը Կարլ Մոռի մասին գրում է.—«Այդպիսի նշանափոր և ականավոր ան-

հատն անխուսափելիորեն դառնում է Բրուտոս կամ Կատիլին, նայած թե ինչ ուղղություն կընդունեն նրա ուժերը: Իրերի մույած թերություններից հետո նա դառնում է առաջինը»: Այս դույն մոլորություններից հետո նա դառնում է առաջինը: Այսպիսով, ֆեոդալական կարգերի գեմ ուղղված Շիլլերի և իր գրական հերոսի բողոքի ամբողջ գծականությունը միանում է հասարակական կարգերի ուեալ վերափոխման անհնարի լինելու համոզմունքի հետ: Հենց այդպես ել վերջանում է Կարլի վողջ շավագակային» դորձունելությունը: «Ո, յես, հիմարս, յերազում եյի ուղղել աշխարհը չարագործություններով, իսկ որենքները պաշտպանել անորենություններով»:

Խնդիրն այն է, վոր այն ժամանակվա Գերմանիայի դասակարգային հարաբերությունների պայմաններում, — վորտեղ Մարքսի պնդումով չեր կարելի խոսել «վոչ դասերի, վոչ դասակարգերի, այլ ծայրահեղ զեպքում միայն՝ նախկին դասերի և չճնամած դասակարգերի մտսին», — գերմանական բուրժուազիայի տարերային հեղափոխական ընդվզումը չեր կարող յերիտասարդ Շիլլերի մոտ վերածվել հեղափոխական կոնկրետ ծրագրի ու գործի: Ֆեոդալական կարգերի գեմ ուղղված բողոքի ու բուն ցաման ամբողջ գծականությունն իրականում անխուսափելիորեն պետք է միանար իգեաների աշխարհը քաշվելու հետ: — այս գերմանական իգեաների աշխարհը պայմանական հակասությունն եր:

Ավելի ուեալիստական է գծված Ֆրանց Մոռին իր նեղ, եղոյիստական նյութական պրակտիկայի ու նույնքան վուլգար մատերիալիստական իդեալների շրջանում: Մատերիալիզմը յերիտասարդ Շիլլերի կողմից գիտվում եր վորպես իր տաելի գեոդալական-բոնակալական կարգերի տեսական արտահայտումն ու աշխարհայացքը: Այս տեսակետից բոլորովին զարմանալի չե, վոր Ֆրանցն իր ցինկի սիրագործություններն արդարացնելու համար գիմում և մատերիալիստական փիլիսոփայության ոգնությանը: Սակայն նա նույնպես ուեալ ֆեոդալական բոնակալից շարիքի աշխարհում, վորպես ոկզրունք: Հասկանալի բացական չարիքի աշխարհում, վորպես ուղղունք: Հետո Շիլլերն պատճառաբանությունը: Հետաքրքիր և դիտել վոր Շիլլերն

*) Фридрих Шиллер. «Статьи по эстетике». Academia, 1936 г. № 516:

Յերիտասարդ Շիլկերի ամենացնցող դրաման անպայման
«Սեր և խարդավանք»-ն է (1784):

Ֆրանց Մերինգը միանգամայն իրավացիորեն Շիլկերի այս
գործը համարում ե բուրժուական դրամայի ամենաբարձր գա-
ղաթը: «Յերբեք մտակը դեսպոտիզմի դեմ այնքան բարձր չեր
ճոճվել և յերբեք դեսպոտիզմն այնպես չեր հարվածվել, ինչպես
այս գործի մեջ»,—ասում ե Մերինգը:

Շիլկերի այս գործի խոշոր արժանիքն այսպէս գաղտնիքն
այն է, վոր նա այստեղ հրաժարվում ե արտօրակա սոցիալական
թեմատիկայից, կանգնում ե պատմական կոնկրետ շոշափելի
իրականության մեջ և հսկայական ըրջադարձ ե կատարում դե-
պի սեալիզմը: Վերցնելով մեշշանական տրագիցիային հատուկ
թեմա,—յերկու տարրեր դասակարգերի պատկանող ներկայա-
ցուցիչների սիրո պատմությունը,—նա պին ներկայացնում ե
XVIII դարի Գերմանիայի կոնկրետ սոցիալ-պատմական ֆոնի
վրա, առաջին անգամ իրար զեմ ե կանգնեցնում յերկու դասա-
կարգեր և մերկացնում ե ֆեոդալական-բանակարգական կարգերի
ամենապաժան և ամենաայլանգակ կողմերն իրենց ցնցող կոնկրե-
տության մեջ: 4

Ճիշտ ե, այս թեման Շիլկերը մշակել ե մեշշանական տրա-
գիցիայի ժանրային առանձնահատկությունների սահմաններում,
բայց բավական ե այն համեմատել նույն թեմատիկան շոշափող
ուրիշ դրամաների հետ, վորպեսզի տեսնենք, թե ինչպես Շիլ-
կերի մոտ «մասնավոր կյանքի» թեման գուրս ե գալիս իր նեղ
սահմաններից և վերածվում սոցիալական լայնածավալ կտավի,
չկորցնելով իր կոնկրետ պատմական յերանգն ու գունավորումը:

Ենթական այս գործի խոշորագույն արժանիքը համարել ե
այն, վոր նա գերմանական առաջին քաղաքական տեսդինցիոն
դրաման ե»:

• Յեկ իրոք Այստեղ Շիլկերն առաջին անգամ հակադրում ե
յերկու աշխարհ՝ ֆեոդալական-բանակարգական աշխարհը և այդ
պայմաններում ճնշվող ու վունահարվող գերմանական բյուրգե-
րության աշխարհը: XVIII դարի Գերմանիայի պայմաններում
սրանք յերկու տարրեր տշխարհներ եյին, հասարակական կյանքի
յերկու բնենոները, իրենց տարրեր շահերով, ըմբնումներով, հա-
սարակական կյանքի մեջ զրավող տեղով ու նշանակությամբ:

Իր դրամայի «իդեալական» պլանում գիտակցաբար ե հրաժարա-
վում ունական բացառությունից: Իր գեղագիտական
հոդվածներում նա ֆրանցի մասին գրում ե. — «Բայց վորտեղից ե
դալիս նրա այդ անբարոյական փիլիսոփայությունը բանաս-
տեղը (ինքը—Հ. Մ.) մեր այդ հարցին վոչ մի պատասխան չի
տալիս: Նրա այդ բոլոր զարդելի հայացքների ու գործերի մասին
մենք չենք գտնում վոչ մի անհրաժեշտ բացատրություն, բացի
արվեստագետի անողնական պահանջից, վորն իր նկարը գեղա-
զարդելու համար, մարդկային ամբողջ բնությունը սատանայի
կերպարանքով գամել ե անարգանքի ոյունին»*): Այսպիսով,
ունական բացատրության բացակայությունն արդարացվում
ե իրեն հեղինակի սուբյեկտիվ նկատառությունով.—Ֆրանցը ֆեո-
դալական «չարիքի» ու գունդիկ նյութականության մարմացություն-
ե, և այս բավական ե, վորպեսզի հեղինակը հրաժարվի «անհրա-
ժեշտ պատճառներ ներկայացնելուց»: Ինքնին հասկանալի յե, վոր
Շիլկերը նույն սկզբունքներից յելներով պետք ե արդարացներ
նաև իր «գաղափարական ավաղակի» իդեալների աշխարհում
ապրելու անխուսարելիությունը:

Յերկվության սկզբունքը դրսելովից ե նաև դրամայի լեզ-
վական բնադրավառում: Կարլը և ֆրանցը խոսում են պարզապես
տարրեր լեզուներով: Վորքան լիրիքական ու յերաժշտական ե
կարի լեզուն, նույնքան կոպիտ ու վուլգար ե ֆրանցի լեզուն:
Շիլկերը պատճառաբանում ե այսպես. — «Այստեղ լեզուն «լիրիկ-
քան և եպիքական ե, մյուս տեղում՝ մետաֆիզիկական յե, յերրորդ տեղում՝ բիթական, իսկ մի այլ տեղ՝ վուլգարը:

Ֆրանցը պետք ե բոլորովին այլ լեզով խոսեր: Գունագեղ լե-
զուն մենք ներում ենք միայն վառ փանտազիային, իսկ ֆրանցը
պետք ե մնա միանգամայն սառը»**):

Այս բոլորից հետո դժվար չի նկատել, վոր Շիլկերի առաջին
դրամայի մեջ ցայտուն կերպով դրսելովում եյին այն բոլոր հա-
կասությունները, վորոնք Շիլկերին մի կողմից պետք ե հասցնե-
յին վայմար, իսկ մյուս կողմից հող ծառայելին «շիլկերականու-
թյան» համար, վորպես ստեղծագործական ուղղություն:

*) Փրիդրիխ Ռայլեր. — «Статья по Эстетике». № 519;

**) նույն տեղ—հջ 526:

✓ Եիլերն ամենամուայլ և ամենազաժան գույներով են ներս
կայցնում առաջին աշխարհը, նոր կոնկրետ ներկայացուցիչներ-
ը ինտ միասին, —պ ը ե զ ի դ ե ն տ ֆ ո ն ~ Վ ա լ տ ե ր, հ ո ֆ մ ա ր-
շ ա լ ֆ ո ն ~ Կ ա լ բ, ք ա ր տ ո ւ զ ա ր Վ ո ւ ր մ: Ֆեղալական-բռնա-
կալական Գերմանիան ներկայացնող այս խարակութերը գծված
են վերին աստիճանի ռեալիստարեն, ամեն մեկն ունի իր պատ-
մությունը, իր գործունեյության կոնկրետ բնագավառը, սկ ա-
րարքների յերկար շղթան և նույնիսկ անձնական կյանքը ֆեռ-
դալական կյանքի տարբեր կողմերը ներկայացնելուց բացի, նրանք
բոլորն ել լցված են մեծագույն արհամարհանքով ու ատելությամբ
դեպի իրենց ստորագրյալները և դեպի այն բոլոր մարդիկ, վո-
րոնք իրենց փիզիկական գոյությամբ վորպես ծանր քար կանդ-
նել են նրանց ֆեռդալական կարյերայի առաջ: | Ալտերը նա-
խագահի աստիճանին ե հասել իր նախորդին ամենաստոր ճանա-
պարհներով հրապարակից «վերացնելու» միջոցով: Քարտուղար
Վորմի իր սիրային գործերը հարթելու և միաժամանակ իր
պալատական կարյերայից զրկվելու նպատակով՝ դիմում և
«կեղծ գոկումենտների» ոգնությանը, իր չարամիտ պլանների
իրազործման զենք դարձնելով դատարկապորտ գոն-կալիքն:
Վերջինս նույնպես «հոփմարշալի» աստիճանին ե հասել ինչպոք
«կեղծ գոկումենտների» և ստորագույն մեքենայությունների
ողնությամբ (գործ, Յ-րդ, պ, Հ-րդ): |

Ֆեղալական զեսոտախզմի հրեշտավոր այլանդակությունների մերկացումը հասնում է իր ամենացնցող արտահայտության յերը լիդի Միլֆորդը պատմում է, թե ինչպես գերմանական իշխաններն իրենց սիրուհիների քմահաճությունները բավարարելու նպատակով հազարավոր «հպատակներ» եյին վաճառքի հանում և նրանց կյանքի զնով անառակ կյանք վարում Այս բոլոր փաստերը Շիլերը վերցրել է եպօխայի գերմանական իրականությունից և ներկայացրել է զնզող ռեալիզմականությամբ:

Թեովալական աշխարհին Շիլլերը հակազդում և բյուրգերական աշխարհը, վորը ներկայացված և յերաժիշտ Միլլերի ընտանիքով և այդ ընտանիքի առանձին անդամներով—կենը և աղջիկը՝ Լուիզան:

Եիլերի այս զբանան իրավացիորեն՝ միշտ համեմատվել է լեսախնդիր «Եմելիա Գալստյանի»-ի հետ։ Մերինդը նույնիսկ ապա-

ցուցել ե, վոր լիդի Միլֆորդն Որսինայի թույլ պատճենն ե, քարտուղար Վուրմը՝ Մարինելիի կուլիտ «վերահրատարակությունը» և այլն։ Սակայն նույն Մերիինզը միանգամայն իրավացիորեն նշում ե, վոր Շիլլերը բուրժուական դրաման բարձրացրեց այնպիսի հեղափոխական աստիճանի, վորին չհասան վոչ միայն հետագայում հրապարակված դրամաները, այլև նրանից առաջ գրված գործերը կեսինզի դրամայի հետ միասին։

Յերաժիշտ Միլլերը կեսինգփի Ողոարդոն չեւ Շիլլերի «Ընատանիքի հայրը» գերմանական «յերրորդ դասի» տիպիկ ներկա յացուցիչն եւ և բաժանում եւ այդ դասի թե ատելությունը զեպի բռնակալական կարգերը և թե նրա դասային նախապաշտում՝ ները: Նրա մեջ հերոսական վոչինչ չկա, բայց նրա վողջ տրամ դիցիայի ելությունն այն եւ, վոր նա պարզ կերպով գիտակցում եւ իր ստոր վիճակն այդ հասարակության մեջ և իր առավելությունները նույն հասարակության «ընտրյալ» մարդկանց համեմ մատությամբ:

35 ~~35~~ Եթիւերն իր դրամայի այս մասում նույնպես կանգնած է
ուեալիստական հողի վրա: Մեշչանական կյանքը նա չի իդեալա-
կանացնում, այլ ամեն կերպ աշխատում և հարազատ մնալ պատ-
մական իրականությանը: Միլիերի հակաֆեռոպալական «ցասումը»
սերորեն միաձուլվում և մանր-բուրժուական ինտիլիգինցիայի
անդրության ու անճարակության հետ: Միլիերի գլխով բոլորովին
չի անցնում հասարակական կարգերը վերափոխելու անհրաժեշտու-
թյան միտքը: Ամենամեծ քայլը, զոր նա կարող ե անել, այդ ցինիկ
վուրմի «վոսկորները ջարդելու» ցանկությունն ե, իսկ մյուս բոլոր
գեպքերում նա զիտի միայն մի յելք: — «Յես աղջկանս հետ միա-
սին կիախչեմ արտասահման»: Բայց այս վերջին ցանկությունը
մյուս կողմից վկայում ե այն մասին, զոր Միլիերի մոտ անչափ
ուժեղ ե «յերրորդ զասի» ինքնազիտակցությունը, զոր նա այլև
չի ցանկանում ֆեռոպալական սանճարձակության խաղալիքը լի-
նել ե իր իրավունքները պաշտպանելու պատրաստակամություն
և հանդիս բերում, թեկուզ այդ իրավունքները սահմանափակվեն
որա ընտանեկան կյանքի շրջանակներով:

Յեկանք առեք, ձերդ գերազանցություն, տնորինեք ձեր յերկիրն այնպես, ինչպես ցանկանում եք: Բայց այս իմ տունն եւ իմ ամենախորին հարգանքները, յեթե յես յերբեքց ձեզ դիմեմ վորոն ինզպով, բայց անկոչ հյուրին յես գուրս կշըրտեմ իմ հարկի շեմքից: Յեվ յեթե այս նույն Միլերը, Ֆերդինանդի շպրտած վոսկու քսակի ազգեցության տակ արագորեն մոռանում ե իր աղջկա խորտակված յերջանկության ամբողջ սարսափելի տրագեդիան, ապա այդ հնչում ե վոչ թե վորպես ֆարս, ինչպես պնդում ե Միլերինը, այլ ցույց ե տալիս, թե ինչպիսի հրեշավոր ազգեցություն կարող ե գործել ֆեռդալական շրջապատը նույնիսկ «յերրորդ դասի» «ընտանիքի հոր» վրա: Ել չեմ խոսում այն բարոյախոսական, մանր բուրժուական միստիցիզմի մասին, վորի մեջ խորասուզված ե Միլերի ընտանիքը՝ ընտանիքի հոր, մոր և աղջկա հետ միասին:)

Յեթե ֆեռդալական և մեշշանական շրջանները ներկայացնելու ժամանակ Շիլլերը մնում է մեշշանական արագեղիայի սահմաններում և գծում ե այդ շրջանների իրական-ուսեալիստական պատկերը, և յեթե հենց այդ կոնկրետության պատճառով յերկի քաղաքական—հակաֆեռդալական տեխնիցին ստանում ե ցնցող համոզություն, ապա յերկի տարրերը մասերում, ինչպես նաև ընդհանրացումների «բաժնում», Շիլլերը դիմում ե իր սիրած ստեղծագործական սկզբունքների ոգնությանը՝ «Միլերականությանը»:

Խարակտերներն սկզբունքի վերածելու ահնդենցները նկատվում ե վոչ միայն ֆեռդալական բանակի ներկայացուցիչներին գծելիս (հատկապես Վալտեր և Վուրմ), այլև իր յերկի կենտրոնական խարակտերներին—Լուիզին և Ֆերդինանդին ներկայացնելիս: Յեվ ձիշտ այնպես, ինչպես Կարլը հակադրվում է Ֆերնանդին, իդեալականը գուեհիկ նյութականին, չարը բարուն, այնպես եւ Լուիզը և Ֆերդինանդը, վորպես գրական իդեալների մարմարացումներ հակադրվում են ֆեռդալական եղոյիզմի և չարախնդության աշխարհին: Արանց վորպերգական կործանումը պետք ե ցուցադրի գրական իդեալի և ֆեռդալական պրակտիկայի անհամատեղելիությունը:

Յերկու տարրեր դասակարգերին պատկանող սիրող զույգերի պատմությունը XVIII դարի բուրժուական գրականության

ամենասիրած թեմաներից մեկն եր: Հասկանալի յի, վոր նա տարբեր գրողների մոտ յուրահամուռկ ձևով և հանդես յեկել: Բայց նա իր բոլոր վարիանտներով միշտ ուղղված ե յեղել ֆեռդալական կարգերի դասային պատնեշների գեմ: Շիլլերի մոտ նույնպես, Լուիզի և Ֆերդինանդի սիրո պատմությունն ընթանում է այդ հոգի վրա, սակայն ամենապատասխանատու մոմենտին Լուիզը և Ֆերդինանդը վեր են ածվում «մաքուր» գաղափարի, նրանց սիրո պատմության ֆարուն «ազատվում ե» ուհալ-սոսցիալական հիմքից և լայն հրապարակ և բացվում գաղափարների «գործունեյության» ու բարոյախոսական սկզբունքների համար:

Ասում են թե Լուիզի սիրո կոլեգիան իր հիմնական գծերով հիշեցնում ե Լիսակինդի նմիշեային: Այս, իհարկե, ճիշտ և միայն վորոշ իմաստով: Ինչի վրա յե խարսխվում այդ կոլեգիան այն բանից հետո, յերբ Ֆերդինանդի հայրը Վուրմի միջոցով պարզապես նրան արգելում է վորդուն սիրել: Յերբ ֆոն-Վալտերը կասկած է հայտնում այն մասին, թե Լուիզը հրապարակում կարող է պատմել իրենց գործադրած բռնության մասին, Վուրմը նրան հավատացնում է.—«այդպիսի մարդիկ իրենց խոստումը կատարում են»: Յեկ իբրոք, Լուիզն իր տված խոստումը սրբությամբ պահպանում է մինչև իր վողբարգական կործանումը: Դժվար չի նկատեք վոր այդ մոմենտից սկսած կոլեգիան խարսխվում է բարոյական դաշնաքի վրա, վորի միակողմանի պահպանումը թույլ կողմին, Լուիզին, պետք ե հասցներ անխուսափելի կործանման: (Լուիզի այդ անձնադրու, բայց պասսիվ հերօսությունը, մյուս կողմից, պետք ե նշանակեր շիլլերյան մարտահրավեր՝ հացեագրված «տիբրաներին», վորպիսի նրանք դուրս չգան համամարդկային ետիկայի ու մորալի սահմաններից:)

Միանգամացն հասկանալի յի, վոր սոցիալական հակասությունների կոնկրետ պատմական լուծման պրոբլեմը վերածել բարոյագիտական սլրութեմի, պրակտիկայում պետք ե նշանակեր հրաժարվել սոցիալական հեղափոխության գաղափարից և վերջի վերջու հաշտվել ֆեռդալական իրականության հետ: Այս տեսակետից անչափ հետաքրքիր և յերկու մոմենտ: Շիլլերի վոչ մի դրամայից այնպես պարզ ու վորոշակի չեր հետեւմ ֆեռդալական կարգերի վերափոխության անհրաժեշտությունը, ինչպես այս դրամայից: Բայց Շիլլերի համար սոցիալական հեղափոխության

թյան պրոբլեմն այստեղ այլևս գոյություն չունի, նա նույնիսկ
հարևանցիորեն չի յել ակնարկում այդ մասին: Յեվ ապա անչափ
հետաքրքիր և «Սեր և խարդավանք»-ի ֆինալը: Ֆերդինանդը,
գերմանական բյուրգերության այդ իդեոլոգիական ներկայացու-
ցիք, հոգեարքի ժամկեն ձեռք և մեկնում իր հորը, հաշտվում ե
նրա հետ և «Ներում» ե նրան.—«Նա ներեց ինձ»—ասում ե նա-
խագահ ֆոն-Վալտերը և իջնում ե վարագույրը:)

4.

Շիլերի «Սեր և խարդավանք»-ով վերջանում է «Փոթոր-
կի և Գրոհի» շարժումը Գերմանիայում: Այդ գործով փակվում ե
նաև նրա գրական գործունեյության առաջին, անպայման հեղա-
փոխական շրջանը, չնայած Շիլերի բոլոր տատանումներին ու
տարակուսանքներին: Նրա ստեղծագործական ուղին այժմ գնում
է յերիտասարդական շրջանի հեղափոխական պաֆոսից, հակառնա-
կալական և հակափեղալական քաղաքական ցասումից հրաժար-
վելու և գերմանական գծուծ, ֆիլիսոփերական իրականության
հետ հաշտվելու ուղղությամբ: Այդ Շիլերի անձնական ցանկու-
թյունն ու ձգտումը չեր իհարկե, այլ գերմանական կյանքի
այն առանձնահատկությունների հետևանք, վորոնք ենդեմի
պնդումով, նույն ֆիլիսոփերության հասցըին և հանճարեղ Գյո-
թեյին, և Կանտին, և Հեգելին: Գերմանիայի այդ առանձնահատ-
կությունների հետևանքով, հակափեղալական ցասումն ու ըմ-
բռատացումն այնուղ չեր կարող մասսայական-քաղաքական շարժ-
ման վերածվել: Այդ պատճառով թե Շիլերը և թե նրա մյուս
նշանավոր ժամանակակիցները բուրժուա-գեմոնկրատական հեղա-
փոխությանն ամենաշատ կարող ելին մասնակցել տեսության
բնագավառում: Յեվ այն ժամանակ, յերբ ֆրանսիական մեծ ենցիկ-
լոնագավառում: Յեվ այն ժամանակ, յերբ ֆրանսիական մարդերը վերջացան բուրժուա-
լուպետիստների սկսած տեսական մարտերը վերջացան բաստիական»
կամ»սոցիալական հեղաշրջումով, ապա նույն «լուսավորչական»
շարժման արդյունքը Գերմանիայում կարող եր լինել կամ
«Գյոցը» կամ «Ավաղակները» և կամ այդ եպոխայի մյուս նշա-
նավոր գեղարվեստական ու փիլիսոփայական գործերը:

Այս տեսակետից անչափ հատկանշական ու տիպական ե
Շիլերի վերաբերմունքը դեպի ֆրանսիական բուրժուական հե-
տափոխությունը:

Հեղափոխական կոնվենտը ֆրանսիայում «Ավաղակներ»-ի

հեղինակին տվեց ֆրանսիական հանրապետության քաղաքացու-
կոչում: Նրան նույնիսկ Դանատոնի ստորագրությամբ դիպում
ուղարկեցին և Շիլերն ընդունեց: Բայց միաժամանակ նույն
Շիլերը հանդես յեկավ Լյուդովիկոս XVII-ի պաշտպանի գերում:
Յեվ յերբ Լյուդովիկոս XVII-ին գլխատեցին, Շիլերը յերես գարձ-
րեց ֆրանսիական հեղափոխությունից, հայտարարելով, թե ինքը
լցված և անող կանք ով գեպի այդ արհամարտ հելի ճորտ-
քեր թարառները: Յեվ այս հասկանալի յեւ Շիլերը վողջու-
նեց ֆրանսիական հեղափոխությունը նրա առաջին ետապում,
յերբ այն ուղղված եր ֆեոդալական կարգերի դեմ, բայց յերբ
գործը հասավ ավելի դեմոկրատական և հեղափոխական միջոցառում-
ներին, նա յերես գարձրեց այդ հեղափոխությունից, վորովհետեւ
աղատությունը նրա համար միայն վերացական գաղափար եր,
բայց վոչ թե գործ:

«Գերմանական մանր-բուրժուազիան,—գրել և Մարքսը,—
վոր բուրժուական շարժմանը միայն ակտիվ իդեալական
մասնակցություն ցույց տվեց, իսկ մյուս բոլոր գեպերում
վճարեց իր սեփական գաղաղով, իր սեփական գործերը ներ-
կայացնում եր վորպես «բարի գործ», վորպես «ազատու-
թյան, ճշմարտության, և մարդկության գործ» և այլն»*):
Շիլերի մանր-բուրժուազիան այդ բարոյախոսական միստի-
ցիզմի համար անչափ հատկանշական և «Դոն-Կարլոսը» (1787),
վորպես սկսվում և նրա գրական գործունեյության յերկրորդ շրջա-
նը, այսպես ասած մաքուր շիլերականության շրջանը: Ճիշտ և,
«Դոն-Կարլոս»-ն իր առաջին վարիանտի մեջ պիտք և հավատա-
րիմ մնա Շառլը ունդ զրանգյան տրադիցիաներին, բայց ստեղ-
ծագործելու պրոցեսում (նա այդ գործի վրա աշխատեց չորս տա-
րի) այդ տրադիցիաները մի կողմն են նետվում և առաջ և քաշ-
փում այն հիմնական գաղափարը, թե հասարակությունն ամենից
առաջ կարիք ունի մարդասիրական գաստիարակման ու բարո-
յական կատարելագործման: Այդ նույն գործի մեջ նա հանդես ե
բերում խաղաղ-ռեֆորմատոր մարդկիզ Պողային, վորի ամբողջ
փիլիսոփայությունն այն և, թե աշխարհը հնարավոր և վերա-
կառուցել բարոյական կատարելագործման ու վերադաստիարակ-
ման ուղիով:

*) Մարկո—Էնգելս, —հատոր 4-րդ, եջ 98:

Այսպիսով Շիլերն իր գրական գործունեցության յերկրորդ շրջանում գերմանական խեղանությունից փրկություն և զորոնում, ինչպես ասում ե Ենգելսը «Փափռուստի մեջ գեղի կանության իդեալը», չհասկանալով, վոր «այդ փափռուստը վերջի գեղի գեղը հանգում եր տափակ խեղճությունը բարձր թռիչ խեղճություն»:

Այս շրջանին են վերաբերում Շիլերի բազմաթիվ հոդվածներն եստիտեկայի մասին, վորոնց թվում նաև նրա հայտնի «Նամակներ» մարդու եստիտեկան դաստիարակության մասին» (1795): Այս շրջանին են վերաբերում նաև Շիլերի մի շարք փիլտրիայական և պատմական աշխատությունները: Վերջապես այս շրջանին են վերաբերում նրա հայտնի բալլագները, բաղմաթիվ բանաստեղծությունները և մի շարք գրամաներ («Վալենշտեյն», «Որդինի կույսը», «Մարիա Ստուարտ»), վորոնց մեջ ամենահաջող գործն անպայման «Վիլհելմ Տելլն» ե:

«Վիլհելմ Տելլ» Շիլերի «կարապի յերգն ե»: Առաջին բեմադրությունից (1894 թ.) մի տարի հետո նա մահացավ: Այս գործը զբամատիկական արվեստի և բեմական տեխնիկայի տեսակետից Շիլերի ամենակատարյալ գործն ե և գերմանական դրամայի հաջող գործերից մեկը: Մյուս կողմից Շիլերն «Ավագակներ»-ից հետո առաջին անգամ նորից շոշափում ե կոնկրետ սոցիալական-քաղաքաբական պրոբլեմներ, նորից դնում ե բռնակալության պրոբլեմը և ասածին անգամ բեմ ե բարձրացնում լայն մասսաներին: «Վիլհելմ Տելլ»-ի այս արտաքին գծերը հնարավորությունն են տվել բուրժուական լիբերալ քննադատությանը՝ քողարկերու այդ գործի իսկական իմաստն ու եյտթյունը և այն ներկայացնելու վորպես Շիլերի ամենահեղափոխական գրաման: Բուրժուական լիբերալ քննադատության այդ սեակցիոն յերւյթների դեմ իր ժամանակ չափազանց սուր ձևով հանդիս յեկավ Ենգելսը, մերկացրեց նրանց սեակցիոն նկատառությունների նույնքան սեակցիոն քաղաքական բովանդակությունը և իրեն հատուկ խորաթափանցությամբ բնութագրեց թե Շիլերի դրամային նյութ ծառայած պատմական իրականությունը և թե լեգենդը Տելլի եյտթյունը: Ենգելսի այդ հանձարեղ տողերը զժբախտաբար հաճախ հաշվի չեն առնվում մեր խորհրդային պատմագրության կողմից, կամ թե Շիլերին «Փիլիլու» նկատառություններով

դիմում են այն հայտնի մեթոդին, վոր սկսվում է այսպես: «Ի հարկի սրանով Ենգելսը չի ուզում ասել թե...» և այն: Իսկ Ենգելսը միանդամայն պարզ ու հասկանալի լիդով ասել ե:

«Շիլերական անտառային կենտրոնների պայքարն Ավստրիայի դեմ, Մյուտլինեմ տրված հոչակավոր յերդումը, Տելլի հերոսական նետարձակումը, Մարգարենի հավերժ հիշտակելի հաղթանակը—այդ ամենն ըմբռոս հովիվների պայքարն ե՝ պատմական զարգացման գրոհի դեմ, տեղական համառ, ճացած շահերի պայքարը՝ լուսավորության դեմ, բարբարոսության պայքարը՝ քաղաքակրթության դեմ: Նրանք հաղթանակեցին քաղաքակրթության գեմ մզած իրենց պայքարում, բայց վորպես պատիժ, այդ հաղթանակի համար նրանք մեկուսացվեցին ամբողջ քաղաքակրթության հաջողություններին մասնակցելուց»*):

Այսպիսով, շիլերական հովիվների և դյուլացիության ըմբռոսացումն Ավստրիայի դեմ պատմական տվյալ ետապում յեղել ե միանդամայն սեակցիոն յերւյթը, հետևապես սոցիալական հեղափոխության մասին վոչ մի խոսք մնել չի կարող: Շիլերը նույնպես իր դրամայի մեջ սոցիալական հեղափոխություն չի, վոր պատկերացնում ե, ընդհակառակը, նրա յերկի կոնցեպցիան ուղղված ե սոցիալական հեղափոխության, ավելի կոնկրետ առանձին հեղափոխական հեղափոխության մեջ թուղթը դեմ: Բացի այդ, բոլորովին պատմական չի, վոր Շիլերը սոցիալական հեղափոխության պրոբլեմը փոխարինել և «ոտորի լծի» դեմ ըմբռոտացով և յերկրում գոյություն ունեցող նահապետական հարաբերությունների ամենակրքու պաշտպանությամբ.

«...Զե վոր այդ մարդիկ
Սովոր են տեսնել, թե ինչպես իրենց
Սար ու ձորեցում միշտ, ամեն տարի
Նույն խոտն ե բուսնում, և աղբյուրները
Միշտ նույն հավասար ջրով են վազում,
Ցեղ մինչեւ անգամ ամպերն ու հողմը
Միշտ նույն ուղղությամբ են այբանդ փշում:

*.) Ենգելս. — «Гражданская война в Швейцарии». Маркс—Энгельс. հատուր 5-րդ, 1922 թ., հջ 228—229:

Նույնպես և իրենց հին վարք ու բարքը
Պապերից սկսած մինչև թոռները
Միշտ պահպանվել են մաքուր, անփոփոխ:
Նրանք ընդդեմ են ամեն նորության
հինգ զոր բնորդեմ և հին սովորության *);

Այսպիսով՝ «ոտար լծի» գեմհանուն յերկրում գույություն ունեցող կարգերի: Այս եանա «Վիճելմ Տելլի» կողեզիան: Բայց չե փոր այդ XVIII դարի 90-ական թվականների և XIX դարի առաջին 20 տարվա գերմանական «աղատագրական» շարժման ուղին ու ծուծն եր՝ ուղղված ֆրանսիական հեղափոխության հաղթարշավի ու Նապոլյոնյան՝ լծի» գեմ:

Յելքուական սեակցիոն պետությունների առաջին մեծ
կոալիցիան ֆրանսիական հեղափոխության դեմ վերաբերում և
1792 թվին: Բայց ինչպես հայտնի յէ նրանց այդ արշավը վեր-
ջացավ կատարյալ անհաջողությամբ, և Ավստրիայի ներկայա-
ցուցիչները 1797 թ. ստիպված յեղան գեներալ Բոնապարտի պա-
հանջով ստորագրել իրենց «պարտության պայմանագիրը»: Յերկ-
րորդ կոալիցիան վերաբերում և Նապոլյոնի յեգիպտական ար-
շավանքների արջանին, բայց նա յել վերջացավ անհաջողությամբ
1801 թ.: Յերրորդ կոալիցիան վերաբերում և 1805 թ., յերր
Շիլլերն ապրում էր իր վերջին որերը:

Հականեղափոխական-մոնարխիստական Յեղոռպայի և Ռուսաստանի այդ սեակցիոն պայքարի մեջ վոչ պակաս կարեոր գերխալաց Գերմանիան, գերմանական ֆեոդալական սեակցիայի սկզբանից ըստ պահանջման՝ «վողորմելի» «վախկոտ» բյուրզերական-նույթյունը, ինչպես արտահայտվում է նրանց մասին Ենգելս:

Վոր հեղափոխական ֆրանսիայի պատմական պայքարը ֆեռագական թեվրոպայի դեմ առաջադիմական յերեսույթ երայդ միշտ նշել են թե Մարքսը, թե Ենդեմը և թե Լենինը. Այսպես, որինակ, Լենինը գրել ե.

«Ֆրանսիական Մեծ հեղափոխության պատերազմներն սկսվեցին վորպես ազգային պատերազմներ և այդպիսին եյթն։ Այդ պատերազմները հեղափոխության ելին—մեծ հեղափոխության մասին»

լսության պլաշտպանությունը հակառեղափառ
խական մոնարիակաների կուտիցիայի դեմ*):
Յեվ ահա այս պայմաններում, —ինչպես բազմիցունշել են
Մարքսը, Ենգելսը և Մերինգը, —գերմանական բուրժուազիայի
աղքային և սոցիալական շահերը մտան հակասության մեջ. և այդ
դասակարգը չեր կարող ոտարի լուծը թոթափել
առանց ներքին, ավելի ծանր լծի տակը ընկնելու
(Ֆրանց Մերինգ):

Գերմանական բուրժուազիան դուրս գալով սոտարի ծիւյթի դիւյթի կեմ, իր թուլության հետեանքով չեր կարող թոթափել նաև «ներքին լուծը»։ Նա պետք է գնար այդ «ներքին լուծը» կրելու, ներքին «անփոփոխ» տրադիցիաները պաշտպանելու և ամեն մի «նորության դեմ» բմբոստանալու ձանապարհով։

Շիլերի «Վիլելմ Տելլ»-ն արտահայտում է գերմանական բյուրգերական իրականության այդ յիշլվությունը, գերմանական բուրժուազիայի այդ ոպղրառնիզմը յուրահատուկ ձևով:

Ծիլլերի մոտ «ոստարի լուծը» ներկայացված և բռնակալության կերպարանքով, բայց Ենգելսի բացատրություններից դժբար չի հասկանալը վոր այդ «բռնակալությունը» քաղաքակրթության և հասարակական պրոգրեսի գրուն եր բարբարոսության դեմ: Յեզ բոլորովին պատահական չե, վոր Ծիլլերն ըմբռութանալով այդ ոտար լծի դեմ, միաժամանակ իր հերոսներին հաշտեցնում և «ներքին լծի» հետ և ի դեմու բարոն Ատախնդհառզենի՛ չափազանցնում և իրեալականացնում և աղջնվականության պատմական դերը, «Ներքին լծի» առավելություններն «ոտար լծի» համեմատությամբ և վերջնականապես հաշտվում և գերժանական Փիլիստերական իրականության հետ:

Սակայն այս բոլորից ամեններն չի հետևում այն, վոր Շիլ-
լերը «Վիլհելմ Տելլ»-ի մեջ վերջնականապես կանգնեց ֆեոդալա-
կան ռեակցիայի դիրքերի վրա: Ընդհակառակը, «ռոտարի լուծը»
կայսերական կուսակալ Հերման Գեորգը մոտ հանդես է գալիս
ֆեոդալական բռնակալության հատուկ բոլոր այլանդակ կողմե-
րով և շիլլերական արտահայտիչ տեսդիմունքությամբ մերկաց-
վում է ու զատապարտվում: Բավական ե վերջինի դրամայի այն

*) Թարգմանություն—Գ. Բարխուդարյանի:

բոլոր տեսարանները, վորտեղ պատկերացվում ե, թե ինչպես
լանդֆոխտները թալանում են գյուղացիներին, թե ինչպես նրանք
վոչ մի բռնության առաջ կանգ չառնելով առևանգում են նրանց
կանանց և աղջկներին, բավական և հիշել Գեսերի հայտնի
հրամանը գլխարկի կապակցությամբ և այլ բազմաթիվ եջեր,
վորպեսպի համոզվենք այս բանում:

«... Վոչ, բանությունն ել վերջապես ունի
մի փորոշ սահման: Եերբ հալածվածը
Արգաբություն չի գտնում վոչ մի տեղ,
Եերբ բեռը դառնում ե անառանելի,
Նա վատահ կերպով դեպի յերկինքն ե
Մեկնում իր ձեռքը, ցած ե բերում իր
Հագիտենական իրավունքները,
Վորոնք վերելից անվաճառելի
Յեկ միշտ հաստատոն կախված են, ինչպես
Յերկնի աստղերը: Բանության նախկին
Վիճակը նորից ե վերագանում,
Ու մարդը մարդու գեմ ե լոկ կանգնած,
Յեկ յեթե ուրիշ հնար չի լինում,
Վորպես մի վերջին, վճռական միջոց,
Նա գեթ իր սուրբն ե իր մոտ ունենում:
Մենք ել կարող ենք բանության գեմ միշտ
Սրով պատպանել ամենաբարձր
Մեր ունեցվածքը: Մեր յերկը, կանանց
Յեկ զավակների համար կանգնած ենք»:

Շիլլերը շվեյցարական գյուղացիության ապստամբության
այս շարժառիթների մեջ ինչպիսի քաղաքական բովանդակու-
թյուն ել գնելիս լինի—այնուամենայնիվ, միանգամայն պարզ ե,
վոր նրա համակրանքն այդ ձնշվող ու վոտնահարվող ժողովրդի
կողմն ե, նրա լեզենդար ներկայացուցիչների՝ Տելլի և մյուսների
կողմն ե: Բայց այս ազատության կոչի հետ միասին Շիլլերը
հրաժարվում ե «ներքին լուծը» հեղափոխական ճանապարհով
վերափոխելու գաղափարից, նա կանգնում ե բոլոր դասերի ներ-
գաշնակ համագործակցության սկզբունքի վրա՝ գեմ դուրս գալով
Փրանսիական հեղափոխության դասակարգային պայքարի տե-
սությանն ու պրակտիկային:

«Վիճելմ Տելլ»-ն իր ներքին կառուցման պարզությամբ իրա-
վացիորեն համարվում ե Շիլլերի ամենալավագույն դրամաի-
կական գործը: Ամենից առաջ պարզ ու հասկանալի յի լեզուն:

Բոլորը—հայրերը և յերեխաները, կարվածատերերը և գյուղա-
ցիները, տղամարդիկ և կանայք խոսում են մի լեզվով, վորն
անչափ պարզ ե, բայց միաժամանակ հանդիսավոր ու ձարա-
սանական: Գործող անձերը դասավորված են պարզ հակագրու-
թյան սկզբունքով:—յերկու ազնվականներ՝ ծեր և յերիտասարդ,
վորոնք տարբեր վերաբերմունք ունեն գեղի գյուղացիությունը,
յերեք կանառների յերեք ներկայացուցիչների, վորոնք միաժա-
մանակ յերեք տարբեր սերունդների ու տրամադրությունների
ներկայացուցիչներ են: Այս սկզբունքով հանդես են ըերված նաև
մյուս գործող անձերը: Դրամայի ֆարությին զարդացման և ծա-
վալման մեջ մենք չենք հանդիպի վոչ հեղափոխական դավադրու-
թյան, վոչ լնդհատակային, վոչ առաջնորդների և վոչ ել ինտրի-
ների բարզության: Ամեն ինչ պարզ ե և կատարվող դեպքերի
մեջ անսպասելի վոչինչ չկա:

Նույն «չարի» և «բարու» սկզբունքը կիրառվել ե նաև այս-
տեղ զբական և բացասական ներուներին գծագրելիս, չնայած
այսուհետ եյական տեղ են բռնում ժողովուրդը, ժողովրդական տե-
սարանները և ժողովրդի մասսայական ցասումն ու ըմբռստա-
ցումը:

Բուրժուական լիբերալ քննազատության կողմից «անմա-
հացվել» և «հավերժացվել» ե վայմարյան եպօպիայի Շիլլերը, իսկ
նրա յերիտասարդական շրջանի գործերի մեջ առաջ են քաշվել և
շեշտվել են այն կողմերը միայն, վորոնք Շիլլերին պետք և տա-
նելին մաքուր ազատության և մաքուր արվեստի զրոշակը պար-
զելու հանապարհով: Բուրժուական լիբերալիզմի այդ կույտն իր
ամենաբարձր գաղաթին հասավ 1859 թվին, յերբ տանըում եր
Շիլլերի մահվան հարյուրամյակը: Այն ժամանակամիտուալ
պլուրեմը բիսմարկյան «հեղափոխության պրոբլեմների («հե-
ղափոխություն վերկեց»)» և միանդամայն հասկանալի յի, թե
ինչու մարկիզ Պողան, այդ ճռճռան ֆրազների ներուսը, դարձավ
գերմանական բուրժուալիզի դրոշակը: Ինչպես վերմանական,
այնպես ել միջազգային քաղաքնիությունը Շիլլերի մեջ տեսնում
եր մատերիալիզմի գեմ պայքարող դրողի իդեալը: Ժամանակա-
կան գործը Ամենից առաջ պարզ ու հասկանալի յի լեզունը

քաշում նրա քաղքենիական-փիլիստերական և կոնսերվատիվ կողմերը, շեշտելով այն ամենը, ինչ վոր Շիլերի թուլությունն երև և ինչ վոր կապված եր գերմանական խեղճության և աղքատության հետ:

Մարքոս և Ենդելու նշելով Շիլերի խոշոր տեղը համաշխարհին զրականության պատմության մեջ, միաժամանակ ուժեղ քննադատության յենթարկեցին «շիլերականությունը»— վորպես զրական-ստեղծագործական ուղղությունն և սկզբունք: Նրանք Շիլերի ամենախոշոր թերությունն ելին համարում այն, վոր նա անհատներին դարձնում է ժամանակի խոսափողեր: Նրանք Լասսալին խորհուրդ ելին տալիս չժերագնահատել Շեքլսպիրին և հաշվի նստել նրա թողած մեծ ժառանգության ուսամատական տրագիցիաների հետ:

Բայց Շեքսպիրին բարձր գասելով հանդերձ՝ նրանք յերբեք չժերագնահատեցին Շիլերին և չհրաժարվեցին նրա թողած դրական ժառանգությունից:

ՎԵՐՍԱԽԻԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես են ներկայացնում Մարքոս և Ենդելու Շիլերի եպոխայի Գերմանիան: Ի՞նչ կապ կա Շիլերի ստեղծագործության և գերմանական այդ իրականության մեջ:
2. Ի՞նչ եր ըստ Ենդելու գերմանական խոշոր մտածողների և արլիստագետների տրագեդիան, և ի՞նչ եր մասնավորապես Շիլերի տրագեդիան:
3. Ի՞նչ պայմաններում ծնվեց և մեծացավ Շիլերը: Ի՞նչ եր նրա ծննդավայր Վյուտտենբերգի սեծիմը և ի՞նչ եր Կարլ Յակոբնի հիմնած զինվորական ակադեմիան:
4. Ի՞նչ ազդեցություն ունեցան Շիլերի վրա Լեսինգը, Գյոթեն, ֆրանսիական XVIII դարի մեծ գրողները և կլասիկ չունաստանը:
5. Ի՞նչ պայմաններում ծնվեցին «Ավագակներ»-ը և «Խարդավանք» և սեր»-ը: Ի՞նչ եր «Ավագակներ»-ի թեման: Ի՞նչ եր Շուրդավանք պատմվածքը: Ի՞նչպես ե այդ պատմվածքը վերամշակել Շիլերը: Վհրանդ պետք ե տեսնել «Ավագակներ»-ի արժեքը: Ի՞նչպես ե վորակում այդ գործն Ենդելու:
6. Ի՞նչ եր «Շառուրմ ունդ գրանդ»-ի ազդեցությունը:
7. Ի՞նչպես յերեան յիկավ Փեողալական պայմանների քննադատությունը Շիլերի տրագեդիայում:
8. Ի՞նչպես ե ոգտագործել և ի՞նչ ազդեցություն ե կրել Շիլերը Շեքսպիրից:
9. Ի՞նչ ենք հասկանում շիլերականություն ասելով:
10. Ի՞նչպես են վորակում Մարքոս ու Ենդելու Շեքսպիրին և Շիլերին: Ի՞նչպես ե արտահայտվում ոեալիզմը Շեքսպիրի ստեղծագործության մեջ և ոռմանտիզմը Շիլերի ստեղծագործության մեջ:
11. Ի՞նչ է մեջանական, սոցիալական դրաման: Ի՞նչպես ե

վորակում Ենթելսը «Խարդավանք և սեր»-ը: Ի՞նչպես ե արտա-
հայտվում ուեալիդմը Շիլերի այդ ստեղծագործության մեջ:

12. Ի՞նչ հակասություններ կային Շիլերի ստեղծագոր-
ծության մեջ:

13. Ի՞նչ շրջանի արտահայտություն ե «Վիլհելմ Տելլ»-ը:
Ի՞նչ հակասություններ կան այդ գործի մեջ: Ի՞նչպես ե Ենգելսը
գնահատում շվեցարական հետամնաց կանոնների այդ պայքա-
րը: Վերն ե «Վիլհելմ Տելլ»-ի մեջ ընդունելին և վերտեղ պետք
ե տեսնել այդ գործի արժեքը: Ի՞նչ գեղարվեստական և ժանրա-
յին առանձնահատկություն ունի այդ գործը:

14. Ի՞նչպես ե մերկացված բոնակալի դեմքը «Վիլհելմ
Տելլ» ստեղծագործության մեջ:

15. Ի՞նչ դեր կատարեց Շիլերը գերմանական գրականու-
թյան մեջ և ինչ ազդեցություն ունեցավ մյուս ժողովությունների
գրականության վրա:





